

ՊՐԱԳՄԱՏԻԿ ԿԱՄ ՊԵՐՖՈՐՄԱՏԻՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ՀԱՐՑԵՐ

Ա. ՏՈՆՈՅԱՆ

Պրագմատիկ կամ պերֆորմատիվ լեզվաբանությունը սկիզբ է առնու
Չ. Պիրսի և Ու. Ջեմսի պրագմատիկ փիլիսոփայությունից: Վերջինս մտած
ղությունն ու գործելակերպը դիտում է միայն պրակտիկ նպատակահարմարու
թյան տեսանկյունից, ճանաչումը համարում է գործելակերպով պայմանա
վորված երևույթ, ինչպես և գործելակերպը՝ ճանաչողության հիմնական նա
խապայման ու նպատակ:

Պրագմատիզմի մեջ օբյեկտիվ ռեալությունը նույնացվում է «փորձի» հետ
խսկ ճանաչողության «սուբյեկտիվ և օբյեկտիվ բաժանումը կատարվում
փորձի ներսում»¹: Մեր բոլոր պատկերացումները, հասկացությունները, դա
տողությունները պրագմատիզմը համարում է մեր գործելակերպի հիմքու
րնկած օրենքներ:

Պրագմատիզմի հիմնական դրույթներն աղղեցություն են գործել մյու
գիտությունների՝ հասարակագիտության (սոցիոլոգիայի), հոգեբանության
լեզվաբանության և առանձնապես՝ նշանագիտության հետագա զարգացմա
վրա: Նշանային տեսության հիմնական սկզբունքները ձևակերպել է Չ. Պիրսը
դրանք հետագայում համակարգել ու շարադրել է Չ. Մորիսը: Նա առանձնաց
րել է նշանային համակարգերի երկու հիմնական գործառույթ՝ տեղեկության
հաղորդում կամ իմաստի արտահայտում և հաղորդակցում: Վերջինս ապա
հովում է հաղորդող տեղեկության ընկալումը լսողի կողմից, ինչպես նաև
դրում է որևէ գործողության: Համապատասխանաբար տարբերակվում են
նշանային համակարգերի ուսումնասիրության երեք հիմնական բաժիններ.
1) շարահյուսություն (նշանային համակարգերի ներքին կառուցվածքի քըն
նություն), 2) իմաստաբանություն (նշանային համակարգը որպես իմաստի
արտահայտման միջոցների ամբողջության ուսումնասիրություն), 3) պրագ
մատիկա (մարդկային գործելակերպի վրա նշանների ունեցած աղղեցությու
նների հետազոտում): Պրագմատիկայի տեսակետից մարդու գործելակերպի
կանոնները դրսևորվում են նշանների և նրանց զուգորդման օրենքների մեջ²:

Ժամանակակից լեզվափիլիսոփայական աշխատանքներում պրագմատի
կա հասկացությունը բազմաթիվ մեկնաբանություններ ունի: Այն մեկնաբան
վում է.

1) որպես լեզվի փաստացի օգտագործում (parole, Performance³ իմաս
տով),

¹ «Философская энциклопедия», М., 1967, հմմտ. «Փիլիսոփայական բառարան», Եր., 1975:

² Ч. Моррис. Основания теории знаков. В кн.: Семиотика. М., 1983, стр. 37—90.

³ Performance—կատարում՝ մարդու լեզվական ընդունակություններ, խոսողի և լսողի
փրբորում, այսինքն՝ լեզվի օգտագործումը կոնկրետ իրադրության մեջ: Տերմինների բա
ցատրությունները տրվում են ըստ հետևյալ աղբյուրի. Th. Lewandowski. Linguistisches Wör
terbuch, Heidelberg, 1979, Bd. 1—3.

2) նշանների կոնկրետ օգտագործման ճշգրիտ ուսմունք,

3) լեզվի ներգործության ասպեկտ (Persuasion)⁴,

4) հաղորդակցման տեսության բաղկացուցիչ մաս, որն ուսումնասիրում է խոսակիցների դիտավորությունները, մտադրությունները, հաղորդակցման գործընթացի մասին հաղորդակցվողների նախնական գիտելիքները, նրանց դերերի բաժանման սկզբունքները, նրանց դիրքորոշումը (ստրատեգիա)⁵,

5) որպես լեզվի առարկայական-վերաբերային իմաստաբանություն (սիգմատիկա)⁶,

6) որպես լեզվի «ինդեքսային»⁷ օգտագործում (հմմտ. դեյքսիսի⁸ և էլիպսի երևույթները),

7) որպես խոսքային այն իրողությունների (ակտերի) և համատեքստերի ուսումնասիրություն, որում հաշվի են առնվում խոսակիցների մտադրությունները, նրանց գիտելիքները, աշխարհայացքը, սպասումները, հետաքրքրությունները, խոսքային իրողության իրականանալու ժամանակը, կատարված արտահայտությունների ունեցած ներգործությունը, նրանց տրամաբանական-իմաստաբանական բովանդակության (պրոպոզիցիայի)⁹ ճշմարտացիությունը:

Պրագմատիկայի այս սկզբունքների հիման վրա հետագայում ստեղծվեց միջգիտակարգային սոցիոլոգիական ուղղվածություն ունեցող հաղորդակցման տեսություն, որը լեզուն, խոսքային գործունեությունը դիտում է որպես հասարակական իրողություն կամ փաստ¹⁰:

Ֆ. Սոսյուրի լեզվի, խոսքի և խոսքային գործունեության¹¹ տեսությունը լեզվաբանության առարկան սահմանափակում էր լեզվի համակարգով, մի բան, որը անտեսում էր լեզվի բուն էությունը՝ հաղորդակցումը: Ֆ. Սոսյուրը մեխանիկորեն անջատում էր միմյանցից անմիջականորեն տրվածը (խոսքը) և նրա ընդհանրացումը (լեզուն) և ուսումնասիրության շրջանակներից դուրս էր թողնում սոցիալականի և անհատականի միջև եղած կապը՝ մի կողմից, լեզվի ու հաղորդակցման միջև կապը՝ մյուս կողմից: Դրա հետևանքը եղավ

⁴ Persuasion—հատուկ մտադրություն լսողին դրդելու, համոզելու, որ նա կատարի որոշակի գործողություն:

⁵ Ստրատեգիա—խոսակցին խոսքի մեջ ներգրավելու, ինչպես նաև հաղորդակցման ընթացքը պլանավորելու արվեստ:

⁶ Սիգմատիկա կամ «վերաբերային իմաստաբանություն» (theory of reference)—լեզվական նշանի հայեցակետերից մեկը, գործառությունը: Նշանային տեսության այն բաժինը, որը զբաղվում է նշանի և սրան վերաբերող արտալեզվական օբյեկտի միջև եղած հարաբերությունների ուսումնասիրությամբ:

⁷ Տե՛ս Р. Якобсон. В поисках сущности языка. В кн.: Семiotика. М., 1983, с. 104

⁸ «Դեյքսիս»—դերանունների և դերանվանական մակբայների մատնանշող գործառությամբ որոշակի իրադրություններում կամ իրադրային համատեքստերում: Դեյքսիսը ոչ միայն ներկայացնում է ստրատեգիան և ժամանակի, այլև պրագմատիկ կողորհնատներ և հաղորդակցման ողջ ընթացքը ընդհանրապես: «Ծս» դիմակարգը հանդես է գալիս մեծ մասամբ որպես դեյքսիկ համակարգի կենտրոն:

⁹ «Պրոպոզիցիա» (Proposition)—նախադասության տրամաբանական և իմաստաբանական բովանդակությունը, որն ընդհանուր է, օրինակ, հետևյալ նախադասություններում. (1) Գիրքը դրված է սեղանին: (2) Դրված է գիրքը սեղանին: (3) Դի՛ր գիրքը սեղանին: Սրբը պրոպոզիցիան բացատրում է հետևյալ կերպ. եթե խոսողը արտաբերում է ինչ-որ նախադասություն, ապա նա արդեն ստեղծում է պրոպոզիցիա: J. Searle, Speech acts, 1969, London, n. S. 29.

¹⁰ Հատ վիզտենշտեյնի տեսության, լեզվի յուրաքանչյուր նախադասություն փաստի նշանային արտահայտություն է: Философская энциклопедия, М., 1967, т. I.

¹¹ Ф. Соссюр. Труды по языкознанию, М., 1977, с. 109—110.

կառուցվածքային լեզվաբանության համար բնորոշ այն տեսակետը, որ հաղորդակցումը գուցե և կարևոր է հոգեբանորեն, սակայն լեզվաբանորեն այն մնում է որպես երկրորդական իրականացում: Հաղորդակցումը ըստ էության դուրս մնաց Ծ. Սոսյուրի տեսության շրջանակներից:

Ն. Խոմսկին փորձեց որոշ չափով հաղթահարել կառուցվածքային լեզվաբանության այդ միտումը և սահմանազատեց լեզվաբանական կոմպետենց (իրազեկություն)¹² և պերֆորմանս (կատարում, լեզվի փաստացի կոնկրետ իրականացում) ըմբռնումները: Հետագայում վերջինս՝ պերֆորմանսը (կատարումը) դարձավ պրագմատիկ լեզվաբանության ուսումնասիրության բուն առարկան:

Ն. Խոմսկու փոխակերպային լեզվաբանության հիմնական հասկացություններից մեկը՝ լեզվական կոմպետենցը, հասկացվում է որպես լեզվական հորինվածք, արստրահում (sprachtheoretische Konstruktion Abstraktion)¹³, և այն վերագրվում է միայն իդեալական խոսողին և լսողին և, վերջապես, համարվում է լեզվաբանության միակ արժանի առարկան (օբյեկտը), մինչդեռ կատարումը՝ խոսքային գործունեությունը¹⁴, փաստորեն խորությամբ չի ուսումնասիրվում որպես ոչ «քերականական»¹⁵, ուստի խոսքային գործունեության սոցիալական համատեքստը (կոնտեքստը) դուրս է մնում ուշադրությունից:

Ն. Խոմսկին կոմպետենց և պերֆորմանս երկրաժանումը սահմանեց հետևելով Ծ. Սոսյուրի լեզու և խոսք բաժանմանը: Նա փորձեց Ծ. Սոսյուրի համակարգային ստատիկ տեսությունը փոխարինել Վ. Հումբոլդտից եկող դինամիկ-սերող ըմբռնմամբ: Հենվելով լեզվի 17-րդ դարի ռացիոնալիստական փիլիսոփայության և Վ. Հումբոլդտի էներգիա-գործընթացային (Energie)¹⁶ ըմբռնման վրա, Ն. Խոմսկին հակառակ նկարագրական-կառուցվածքային լեզվաբանության, լեզուն համարում է ստեղծագործական փաստ (հմատ. Kreativität)¹⁷: Վերջինս կազմում է կոմպետենցի էությունը, որը թույլ է տալիս ստեղծել դեռևս երբեք չլսված նախադասություններ և, միաժամանակ, դրանք հասկանալ:

Լեզուն ընձեռում է անթիվ, անհամար նախադասություններ սերելու և մեկնաբանելու բազմազան միջոցներ: Այդ նախադասությունները հանդես են

¹² Մարենի լեզվով խոսողի լեզվական ընդունակություններն են, նրա ներքին ոչ ռեֆլեկտորային իմացությունը իր լեզվի մասին, կոմպետենցի ոլորտին են պատկանում հաղորդակցվողների այն ընդունակությունները, որոնք թույլ են տալիս խոսողին հնարավորին չափ շատ նախադասություններ կազմել ու հասկանալ, ինչպես և դատել երկու և ավելի արտահայտությունների նույնության, դրանց ձևական նմանության, բազմիմաստության և գրանցից կատարվող շեղումների մասին և այլն: Տե՛ս N. Chomsky, Aspects of the Theory of Syntax Cambridge, 1965, S. 13. Հմատ. ըստ Հումբոլդտի «պատրաստի գործը» (էրգոնը): Տե՛ս է. Աբայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., 1981, էջ 115:

¹³ N. Chomsky. Aspekte der Syntax-Theorie. 1969, S. 19.

¹⁴ Խոսքային գործունեությունը հասկացվում է որպես խոսք կամ խոսողություն: Խոսելը դիտվում է որպես գործընթաց, և այն է՝ որպես դեպի խոսակիցը ուղղված խոսքային իրողություն: Խոսքային իրողությունը (ակտը) խոսքի հատույթ է, ընդդրային-հեղինակային և արտաքերային-իմաստային միավոր, որն ասույթի բովանդակության համաձայն խոսողին և լսողին միացնում է մի որոշակի իրադրության մեջ:

¹⁵ P. Белл. Социолингвистика. Предисловие А. Швейцера, М., 1980, с. 12.

¹⁶ Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Եր., 1960, էջ 331: G. Helbig. Geschichte der neueren Sprachwissenschaft. Leipzig, 1970, S. 13.

¹⁷ J. Katz, Philosophy of Language. N. Y.—London, 1966, p. 95.

գալիս որպես մտքերի, զգացմունքների, ստեղծագործական երևակայության, պատկերացումների, զանազան հակազդեցությունների արտահայտություն:

Ասուլթի սերման գործընթացը փոխակերպային քերականության մեջ հասկացվում է վերացական մաթեմատիկական իմաստով և ոչ թե որպես խոսակիցների փոխհարաբերության ընթացքում անմիջականորեն ծնվող երևույթ, ինչպես այդ հասկանում են պրագմատիկ լեզվաբանության ներկայացուցիչները, որոնք զբաղվում են հաղորդակցական-խոսքային իրողությունների տեսությամբ:

Յ. Հաբերմասը այս առիթով քննադատում է Չ. Խոմսկուն լեզվական կոմպետենցի նեղ ըմբռնման համար, քանի որ կոմպետենցը վերջինիս կողմից հասկացվում է որպես անհատական կարողություն և վերագրվում է միայն իդեալական խոսողին և լսողին: Ն. Խոմսկու տեսությունը ըստ էության չի բացատրում մարդու գործելակերպը հաղորդակցման ընթացքում:

Խոսքի ընթացքում սերվում են ոչ միայն ասուլթներ, այլև հնարավոր խոսքային իրադրություններ, որոնք Յ. Հաբերմասը դիտում է որպես ընդհանրույթներ¹⁸: Պրագմատիկայի ընդհանուր խնդիրն է ստեղծել այնպիսի ընդհանրույթ օրենքների ու կանոնների մի համակարգ, որի օգնությամբ հնարավոր դառնա համապատասխան հաղորդակցական և խոսքային իրադրությունների սերումը:

Խոսքային իրադրությունը ասուլթի պրագմատիկ համատեքստն է, իրադրային-համատեքստային այն պայմանների ամբողջությունը, որի մեջ սերվում և ընկալվում է որևէ ասուլթ: Դա խոսակիցների միջև հաղորդակցման փոխադարձ ընթացքի անձնական, ժամանակային, տեղային գործոնների հանրագումարն է (հմտտ. Interaktion): Ներքին և արտաքին նախապայմանների այս համահյուսվածքը հանգեցնում է այն բանին, որ խոսողը կամ լսողը հենց այս խոսքն է ասում, հենց այս ձևով է ասում և ասում է հենց այս ակնթարթին, մի բան, որը խոսքային գործունեության ընթացքի բառային և ոչ բառային տարրերի փոխհարաբերության¹⁹ արդյունքն է: Ըստ Ա. Լեոնտևի խոսքային իրադրությունը կազմվում է լեզվական և ոչ լեզվական այն պայմաններով, որոնք «անհրաժեշտ և բավարար են, որպեսզի մենք խոսքային գործունեությունը իրականացնենք մեր կողմից նախապես պատրաստված պլանի համաձայն»²⁰: Այսպիսով պրագմատիկ լեզվաբանության շնորհիվ հնարավորություն ստեղծվեց լեզվի նկարագրությունը համալրել պրագմատիկ տարրերով, այնպես, ինչպես ժամանակին ասեմանտիկ շարահյուսության տեսությունը լրացվեց իմաստաբանական բաղադրիչներով²¹: Հանրալեզվաբանությունն էլ իր հերթին ընդարձակեց լեզվաբանական ուսումնասիրության շրջանակները, լեզվաբանական վերլուծության ոլորտի մեջ առավ խոսողի և խոսակցի փոխհարաբերության այսպես կոչված «քերականությունը»:

Հաղորդակցման պրոցեսը ինչ-որ տեղեկությունների հաղորդման պարզ ֆիզիկական գործընթաց չէ: Դրա շնորհիվ հաղորդումը, անհատական բնույթ ունենալով, միաժամանակ դառնում է մի որոշակի հասարակական գիտակցված երևույթ: Հաղորդակցական գործունեության այսպիսի ըմբռնումը հնա-

¹⁸ J. Habermas. N. Luhmann. Theorie der Gesellschaft. F/M, 1971, S. 103.

¹⁹ Հ. Վանրիխի կարծիքով այդ դեպքում փոխադարձ կապի մեջ են մտնում խոսքը և աշխարհը. H. Weinrich. Tempus. Besprochene und erzählte Welt, Stuttgart, 1964, S. 24.

²⁰ A. A. Леонтьев. Слово в речевой деятельности. М., 1965, с. 124.

²¹ J. Katz. J. Fodor, The Structure of a Semantic Theory. Language, 1962, 39:2.

Г. Г. Гак. К проблеме семантической синтагматики. В кн.: Проблемы структурной лингвистики. М., 1971, с. 367.

րավորություն է տալիս խոսողությունը դիտել որպես մարդու անհատական հոգեկան կարողություն և գործունեության ձև, խոսքը որպես այդ գործունեության իրականացում, դրանով իսկ հաղորդակցումը հասկանալով նաև որպես մարդու հասարակական գործունեության բաղկացուցիչ մաս: Զ. Օստինը դեռ 50-ական թթ. սկսեց ուսումնասիրել այսպես կոչված պերֆորմատիվ ասույթները, որոնց օգնությամբ գործողությունները ոչ միայն անվանվում են, այլև հենց իրենք հանդես են գալիս որպես այդ գործողությունների իրականացումը: Հմմտ. Նս քեզ կնքում եմ չ անունով²², — ասույթը ոչ միայն նկարագրում է խոսքային գործողություններից դուրս գտնվող կնունքի գործողությունը որպես մարդկային փորձում նախապես տրված մի իրողություն, այլ հենց ինքը՝ ասույթը բուն այդ կնունքի գործողության իրականացումն է:

Խոսքային արտահայտություններն ըստ Զ. Օստինի տեսության հասկացվում և վերլուծվում են որպես մարդու կողմից կատարված գործողություններ²³:

Նա, ով խոսում է, միաժամանակ իրականացնում է որոշակի գործողություն, այսինքն՝ արտաբերում, սերում է հնչյուններ, բառեր և շարահյուսական կառույցներ: Այդ հնչյունները, բառերը, շարահյուսական կառույցները հարաբերվում են արտաքին աշխարհի հետ, ինչ-որ բան են ասում այդ աշխարհի մասին:

Խոսողն իր արտաբերած ասույթով միտք է արտահայտում, հաղորդակցվում է լսողի հետ և միաժամանակ նրան բացահայտում է իր հաղորդակցական մտադրությունը: Այս մտադրության հետ է կապված Զ. Օստինի կողմից լոկուտիվ, իլլոկուտիվ և պերլոկուտիվ իրողությունների տարբերակումը, որպես կոնկրետ խոսքային գործունեության կարևոր հայեցակետեր²⁴:

1. Լոկուտիվ ակտը ասույթի արտաբերումն է համապատասխան ձևի և իմաստի հարաբերակցությամբ: Այս ակտին Զ. Օստինը վերագրում է հետևյալ ստորաբաժանումը.

ա) հնչյունական (ֆոնետիկական) ակտ՝ որոշակի աղմուկի արտաբերում, բ) ֆատիկ ակտ՝ որոշակի քերականական հատկանիշներով որոշակի բառերի արտահայտում և գ) ուտիկ ակտ՝ մի բանի մասին մի որոշակի բան ասելը, խոսելը²⁵:

2. Իլլոկուտիվ ակտը լոկուտիվ ակտի հետ կապված ասույթի արտաբերումն է, որն ուղղված է դեպի խոսակիցը: Սա խոսքային ակտի կենտրոնական բաղադրիչն է՝ խոսողի խոսքային մտադրությունը կամ դիտավորությունը, որը նպատակ ունի հաղորդակցական ազդեցություն թողնել լսողի վրա՝ որևէ բան հարցնել, հրամայել, խոստանալ, դգուշացնել, արգելել և այլն:

²² Օրինակը Գ. Վոնդերլիխինն է: Հմմտ. D. Wunderlich, Pragmatik, Sprechsituation, Deixis, in: Zeitschrift für Literatur und Linguistik, 1971, Heft 12, S. 165.

²³ J. Austin, How to do Things with Words, Oxford, 1962, S. 6.

²⁴ Է. Աթայանը հետևյալ հաղորդականությամբ է տարրորոշում լեզվական գործունեության պահերը, որով աճելի հստակ և ամբողջական է ներկայանում հաղորդակցման ողջ ընթացքը (լեզվագործունեության ներունակ ոչ լեզվական օբյեկտ) → ստորոգում → ներկայացում → հաղորդակցում → (լեզվական «օբյեկտի հնչյունային, տառային կամ որևէ այլ «նշանակող») → ապահաղորդակցում → ապաներկայացում → ապաստորոգում → (լեզվագործունեության իրափն ոչ լեզվական օբյեկտ): Տե՛ս է. Աթայան, Գործառական հատկանիշների բաշխումը մարդու լեզվական գործունեության մեջ: Հորիզոնական գիտական նստաշրջանների նյութերի ժողովածու նվիրված ԾՂ-ի 60-ամյակին, Եր., 1981, էջ 345—360:

²⁵ Զ. Օստինի ուտիկ մասնակի իրողությունը (ակտը) Զ. Սթրլի մոտ հանդես է գալիս որպես վերաբերային իրողություն (Akt der Referenz). J. Searle, Sprechakte. Ein philosophisches Essay. F/M, 1971, S. 30.

խոսքային իրողության իլլոկուտիվ բաղադրիչը կարող է արտահայտվել որևէ պերֆորմատիվ բայով:

2. Սըրլի համար մարդկային հաղորդակցման տարրական միավորները հանդես են գալիս որպես իլլոկուտիվ գործողություններ. (1) Դուռը փակելու եք: (2) Դուք դուռը փակելու եք: (3) Փակեք դուռը: (4) Ծն կցանկանայի, որ դուք դուռը փակեք,— այս ասույթներն ունեն մի ընդհանուր կանխանկալադրուսթյուն (Präsupposition)՝ դուռը բաց է: Նշված ասույթներն ունեն նաև շորտարբեր իլլոկուտիվ գործառություններ. (1) հարց, (2) նախազուշացում, գուշակում, (3) հրաման, խնդրանք, (4) ցանկություն:

3. Պերլոկուտիվ ակտը բաղադրվում է խոսքային գործունեության հետ կապված հնարավոր հետևանքներից, որոնք ի հայտ են գալիս հաղորդակցման հետագա փուլերում: Ըստ 2. Օստինի, սա խոսքային գործունեության լոկուտիվ և իլլոկուտիվ ակտերի հետ միաժամանակ իրականացվող մի գործողություն է: Պերլոկուտիվ ակտը ավելի շուտ հոգեբանական գործոնի բնույթ ունի: Դա լսողի մտքերի, գործողությունների, զգացմունքների վրա խոսողի ունեցած ազդեցությունն է: Այս ամենը միասին վերցրած կազմում են տվյալ հաղորդակցական իրադրության պլանը կամ նպատակը 2. Սըրլի համար պերլոկուտիվ իրողությունները այն հետևանքներն են կամ հակազդակները, որոնք ներգործում են խոսող-լսողների գործելակերպի, մտքերի, աշխարհայացքի վրա (համոզել, խորհուրդ տալ, պահանջել, ահազանգել և այլն):

2. Օստինի և 2. Սըրլի կողմից խոսքային ակտերի տեսության հետագա զարգացումը նրանց հանգեցրեց ծայրահեղության: Իլլոկուտիվ ակտերը նրանք մեկնաբանեցին որպես գործունեության ձևեր, որոնք ենթարկվում են որոշակի սոցիալական, քայց ոչ քերականական կանոնների: Ըստ էության նրանք չեն տարբերակում «կոմպետենց» և «պերֆորմանս», որ նույնն է, թե՛ «լեզու» և «խոսք» հասկացությունները, քանի որ, ըստ նրանց, խոսքային գործունեությունը ինքն իր մեջ արդեն ունի որոշակի կառուցվածք, լեզվի օգտագործումը կապված է նրա իմացության հետ, մինչդեռ իդեալական խոսող-լսողի կոմպետենցը այդ իմացության մի մասն է միայն: Ուստի լեզվաբանության խնդիրը նրանք համարում են հաղորդակցական այնպիսի կոմպետենցի կաղապարի ստեղծումը, որն ընդգրկի միայն հաղորդակցական սոցիալական նորմաների իմացությունը:

2. Սըրլի կարծիքով խոսքային գործունեությունը ոչ միայն հաղորդակցման հիմնական միջոցն է, այլ նաև լեզվաբանության ուսումնասիրության բուն առարկան, քանի որ խոսքային իրողության ուսումնասիրությունը համարժեք է հենց լեզվի ուսումնասիրությանը:

Հաղորդակցման կոմպետենցի այսպիսի ըմբռնումը հակասում է հենց իրենց՝ 2. Օստինի և 2. Սըրլի տեսության մեջ առանձնացված լոկուտիվ ակտի էությանը, քանի որ վերջինս գոյություն ունի միայն որոշակի քերականական ձևի և բովանդակության հարաբերակցությամբ:

Հետևաբար խոսքային գործունեության ուսումնասիրության ժամանակ պետք է հաշվի առնել ինչպես հաղորդակցման սոցիալական նորմաները, այնպես էլ քերականության ճիշտ կանոնները:

Մայրենի լեզվի իմացությունը միաժամանակ ճանաչման և վերացարկման համակարգ է, որը զարգանում է վախ մանկությունից, ընկած է մարդու վարքագծի, գործելակերպի հիմքում, այն չի իրականանում ուղղակի պարզ ձևով: Խոսողի, ինչպես նաև լսողի պատկերացումներն ու հաղորդումներն իր սեփական կոմպետենցի մասին կարող են սխալ կամ մոտավոր լինել, նրա ոչ ռեֆլեկտորային իմացությունը լեզվի համակարգի մասին միշտ չէ, որ մատչելի է իր համար:

խոսքային իրողության տեսությունը ավելի զարգացրեց Դ. Վունդերլիխը: Նա խոսելը բնորոշում է որպես մարդկային գործունեության կարևոր և համարժեք բաղադրիչ: Քերականական կանոնների կողքին Դ. Վունդերլիխը տարբերակում է նաև հաղորդակցական կոմպետենցիա²⁶, որը սակայն ինչպես նկատում է նա, գերիշխում է քերականական կոմպետենցիան: Վունդերլիխի այս դրույթը սկզբունքորեն ճիշտ է, քանի որ լեզվի օգտագործման սոցիալական նորմաների իմացությունը, անկասկած, պակաս կարևոր նշանակություն չունի հաղորդակցական պրոցեսի համար, քան քերականական կանոնների իմացությունը:

Սակայն լեզվի ուսումնասիրության համար առավել կարևոր է այս երկու հայեցակետերի միասնությունը, քան մեկի կամ մյուսի գերակշռության ընդգծումը: Ուստի և այդպիսի միասնության մասին հարցադրումը ավելի ճիշտ կարող է արտահայտել լեզվական այդ իրողության էությունը, քանի որ, իրոք, լեզվի համար կարևոր այս երկու նորմաները սերտորեն կապված են միմյանց հետ, կազմում են մեկը մյուսի շարունակությունը, թեև երբեք մեկը մյուսի հետ չեն նույնացվում:

Հաղորդակցական կոմպետենցիան նշանակում է ոչ միայն քերականորեն ճիշտ ասույթներ սերելու, այլև այնպիսի ասույթների ընտրության ունակություն, որոնք ավելի լիարժեք են արտացոլում տվյալ իրողության սոցիալական նորմաները, նրանց սոցիալական համատեքստը:

Դ. Վունդերլիխը տարբերակում է խոսքային գործունեության հետ կապված երեք հիմնական իլլոկուտիվ տիպ՝ պահանջ, հարց և հաստատում: Նա գտնում է, որ արտահայտության (ասույթի) ձևի և խոսքային գործունեության միջև մեծ մասամբ համապատասխանություն չի կարող լինել, և որ նույն ասույթի հետ կարող են կապվել տարբեր խոսքային իրողություններ: Այսպես օրինակ՝ հարցական նախադասությունը, որպես իլլոկուտիվ ասույթի ձև, կապված է ոչ միայն հարցի, այլ նաև կշտամբանքի, հանդիմանության, հարկադրման խոսքային իրողությունների հետ, կամ էլ նույն իրադրային համատեքստում տարբեր արտահայտություններ կարող են ունենալ նույն հաղորդակցային գործառությունը:

Յ. Հաբերմասը առանձնացնում է խոսքային իրողությունների առանձին խմբեր, որոնք լեզվի մեջ դրսևորվում են որպես անհրաժեշտ կանոններ (essential rule), պատկանում են պրագմատիկ ընդհանրությունների²⁷ թվին: Դրանք հիմնականում համընկնում են Ջ. Օստինի և Ջ. Սըրլի առանձնացրած իլլոկուտիվ իրողությունների իմաստների հետ.

ա) արտահայտության ճանաչողական-նշումային բովանդակություն (Konstativa),

բ) խոսքի հաղորդային-պրագմատիկ բովանդակություն (Kommunikativa),

գ) խոսողի մտադրությունների, դիտավորությունների ներկայացման ձև (Repräsentativa),

դ) խոսող-լսող հարաբերությունը կարգավորող բովանդակություն (Regulativa):

Խոսքային նշված ակտերի ուսումնասիրության ժամանակ հաշվի են առնելով իրադրության սոցիալական, հոգեբանական, տրամաբանական հայեցակետերը:

Սոցիալական հայեցակետը հաղորդակցվողների միջև գոյություն ունե-

²⁶ D. Wunderlich. Linguistische Pragmatik, F.J.M., 1972, S. 20.

²⁷ J. Habermas, Theorie der Gesellschaft, S. 111.

ցող սոցիալական որոշակի հարաբերությունն է, որը խոսողին թույլ է տալիս դրդել խոսակցին՝ որևէ գործողության իրականացմանը:

Խոսողը արտաբերում է ասույթը, որի հետ կապված գործողությունը իրականանում է որպես իլլուկուտիվ ակտ և ուղղվում լսողին: Դա խոսքային իրողության առաջին և կարևոր նախապայմանն է:

Հոգեբանական հայեցակետն անմիջականորեն կապված է սոցիալականի հետ: Այն խոսող-լսողի կամքի, ցանկության արտահայտությունն է: Այստեղ հաշվի են առնվում խոսակիցների փորձի հորիզոնը, հաղորդման պատճառաբանվածությունը, նրանց հույզերը, հիշողությունը, ուշադրության կամ հետաքրքրության շեղումը, շփոթվածությունը, ցրվածությունը, նրանց կատարած տիպիկ և պատահական սխալները:

Հոգեբանական հայեցակետը կապված է թե՛ խոսողի և թե՛ լսողի մտադրությունների, դիտավորությունների և հոգեկան ապրումների հետ: Սոցիալական և հոգեբանական հայեցակետերից բխում է պահանջվող գործողության անհրաժեշտ կամ ֆակուլտատիվ լինելը, որը կազմում է խոսքային իրողության տրամաբանական կողմը²⁸:

А. М. ТОНОЯН—Некоторые вопросы прагматической или перформативной лингвистики.—В статье излагается и критически анализируется ряд положений одного из актуальных течений современной науки о языке—так называемой прагматической или перформативной лингвистики. Выявляются истоки этого направления в истории семиотики и лингвистики, раскрывается содержание основных понятий и понятийных систем, воспроизводящих структурно-функциональные черты прагматического аспекта языковой деятельности человека. Вместе с тем вскрывается односторонность отдельных моментов и подходов у ряда представителей данного направления. Подчеркивается важность прагматико-перформативного подхода к изучению речевого процесса и его языковых основ.

²⁸ Սոցիալական, հոգեբանական և բամբարանական գործոնների գործառույթի մասին մանրամասն տե՛ս Ա. Տոնոյան, Պահանջ արտահայտող պերֆորմատիվ բայերը գերմաներեն լեզվում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, 2, էջ 207—218: